# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ԱՄ-2018/212**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.12.2018թ. թիվ 27/26-3/23882-18 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի 11.12.2018թ. թիվ 54-Գ և 17.12.2018թ. թիվ 55-Գ գրությունների հիման վրա, 21.12.2018թ. թիվ 27/26-3/23882-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/212 ընթացակարգի շրջանակներում 27.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.12.2018թ. թիվ 54-Գ և 17.12.2018թ. թիվ 55-Գ գրություններով հայտնել է, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ՏՊ» ծածկագրով մատակարարման պայմանագիրը, ըստ որի Ընկերությունը ապրանքների մատակարարումը պետք է իրականացներ «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին, 2018թ. դեկտեմբերի 11-ին ամբողջությամբ միակողմանիորեն լուծվել է, քանի որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն չի կատարել պայմանագրով ստանձնած ապրանքների մատակարարման պարտականությունները, ինչի մասին ծանուցումը ներկայացվել է հրապարակման www.gnumner.am կայքի համապատասխան բաժնում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/212 ընթացակարգի շրջանակներում 27.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **ՍՑ-ԱՄ-2018/212 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ՍՑ-ԱՄ-2018/212 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ՏՊ» ծածկագրով «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ. Պատվիրատուի գնման հայտի հիման վրա «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին մատակարարել ընդհանուր 21 հատ հանդերձանք և անկողնային պարագա:

2. «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ուղղված 11.12.2018թ. թիվ 53-Գ գրությամբ «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1, 2.1.7. և 2.1.7.1 կետի «բ» ենթակետը Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծվում է (www.gnumner.am կայքում հրապարակվել է 12.12.2018թ.):

5. **ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.12.2018թ. թիվ 27/26-3/23882-18 գրությունը, «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի 11.12.2018թ. թիվ 54-Գ և 17.12.2018թ. թիվ 55-Գ գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ՏՊ» ծածկագրով «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.5-րդ կետով սահմանվել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Պայմանագրի N 1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ. պատվիրատուի գնման հայտի հիման վրա «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին մատակարարել ընդհանուր 21 հատ վերմակ:

16.11.2018թ. «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրոնային եղանակով «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ներկայացվել է գնման հայտ, որի համաձայն Ընկերությանն առաջարկվել է մինչև 26.11.2018թ. մատակարարել 21 հատ վերմակ:

Ընկերությանն ուղղված 27.11.2018թ. թիվ 52-Գ գրությամբ «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ համաձայն Պատվիրատուի կողմից 16.11.2018թ. ներկայացված գնման հայտի՝ մատակարարման վերջնաժամկետն ավարտվել է 26.11.2018թ., սակայն Ընկերության կողմից որևէ մատակարարում չի իրականացվել: Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Ընկերության կողմից մատակարարում իրականացնելու վերջնաժամկետ է սահմանվում մինչև 10.12.2018թ.:

Նույն գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է Ընկերությանը, որ սահմանված ժամկետում մատակարարում չիրականացնելու դեպքում Պայմանագիրը միակողմանի կլուծվի:

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ուղղված 11.12.2018թ. թիվ 53-Գ գրությամբ «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից Պայմանագրի հիման վրա որևէ մատակարարում չի իրականացվել, ինչպես նաև ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով, Պայմանագրի 2.1.1, 2.1.7. և 2.1.7.1 կետի «բ» ենթակետով, միակողմանի ամբողջությամբ լուծում է «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի և «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագիրը:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետով և նույն կետի 2.1.7.1 ենթակետով սահմանվել է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

***բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ընկերության միջև 30.05.2018թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ՏՊ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում չի իրականացրել Պայմանագրով նախատեսված ապրանքը մատակարարելու իր պարտականությունն, էականորեն խախտելով Պայմանագիրը, ուստի գտնում եմ, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.12.2018թ. թիվ 27/26-3/23882-18 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00907267) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ